ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » հոկտեմբերի 2019 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-297-25.09.2019-ՏՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հոկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1479 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-297-25.09.2019-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱ-ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) մի շարք հոդվածներում առաջարկվող փոփոխություններով նախատեսվում են նոր կարգավորումներ՝ իրական սեփականատերերի բացահայտման պահանջի ներդրման և չբացահայտման դեպքում պատասխանատվության միջոցների կիրառման հետ կապված հարաբերությունների վերաբերյալ։

Նախագծին կից ներկայացված հիմնավորման համաձայն՝ օրենքի ընդունման նպատակն է էներգետիկայի բնագավառում, որը հանրային ծառայությունների կարևորագույն ոլորտներից մեկն է, թափանցիկության ապահովումը, ինչն ամրագրված է Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրում՝ որպես կոռուպցիայի դեմ պայքարի գործիքներից մեկը։

Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2019 թվականի փետրվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» ԱԺՈ-002-Ն որոշման «3.3. Տնտեսական գործունեության թափանցիկությունը» գլխում սահմանված է. «Կոռուպցիայի դեմ պայքարի կարևոր գործիքներից են նաև օրենքով սահմանված որոշակի ոլորտներում գործունեություն ծավալող՝ պետական գրանցում ստացած իրավաբանական անձանց իրական սեփականատերերի բացահայտումը և նրանց վերաբերյալ տեղեկությունների ընդհանուր և հանրամատչելի հարթակի ներդրումը՝ ապահովելով իրական սեփականատերերի վերաբերյալ տվյալների հրապարակայնությունը։ Կառավարությունը մտադիր է մշակել այդ հարթակի ներդրման ճանապարհային քարտեզ։»։

Առանձին ոլորտներում իրական սեփականատերերին բացահայտելու նպատակով ճանապարհային քարտեզի (այսուհետ՝ ճանապարհային քարտեզ) մշակման պահանջն իր արտացոլումն է գտել նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 650-Լ որոշման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի

հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրա- կանացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշման մեջ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախատեսում է իրական սեփականատերերին բացահայտել համակարգված մոտեցման, այն է՝ ճանապարհային քարտեզի միջոցով խնդիրների վերհանման, օրենսդրական փոփոխությունների իրակա-նացման և թիրախային ոլորտների աստիճանական սահմանման միջոցով:

Հաշվի առնելով շարադրվածը, ինչպես նաև՝ բազմաթիվ խնդիրներ, որոնք առկա են ինստիտուտի ներդրման գործընթացում, և այն հանգամանքը, որ ներկայումս միջազ-գային կազմակերպությունների հետ իրականացվում են ակտիվ բանակցություններ իրա-կան սեփականատերերի բացահայտման համար անհրաժեշտ կարգավորումների հստա-կեցման, միասնական քաղաքականության որդեգրման և գործուն կառուցակարգերի ներ-դրման շուրջ, գտնում ենք, որ հատվածային լուծումներն այս պահին անթույլատրելի են, ուստի, առաջարկում ենք այս փուլում ձեռնպահ մնալ ներկայացված նախագծի քննարկումից և, անհրաժեշտության դեպքում, նախագծի դրույթներին անդրադառնալ խնդրի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ներկայացվելիք օրենսդրական նախաձեռնությունների շրջանակներում:

Այդուհանդերձ, ստորև ներկայացնում ենք նախագծով նախատեսված կարգավո-րումների վերաբերյալ մեր դիտողությունները: Այսպես.

1. Նախագծի 1-ին հոդվածով իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկու-թյուններ բովանդակող քաղվածքի հասկացությունից հետո սահմանվում է, որ քաղված-քում ներկայացվում են 10 տոկոսից ավելի մասնաբաժին ունեցող անձանց վերաբերյալ տեղեկությունները: Հարկ է նկատել, որ «Իրավաբանական անձանց պետական գրանց-ման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապե-տության օրենքի 26-րդ հոդվածի 25-րդ մասով սահմանվում է. «Իրավաբանական անձի իրական սեփականատիրոջ պետական գրանցումը հավաստվում է պետական միասնա-կան գրանցամատյանից տրված քաղվածքով, որն…»: Միաժամանակ, նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետն սպառիչ սահմանում է իրական սեփականատիրոջ հասկացությունը:

Վերոնշյալի համատեքստում նախագծով առաջարկվող նոր կարգավորումը նպա-տակահարմար չէ և ամբողջությամբ չի արտացոլում «Իրավաբանական անձանց պետա-

կան գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հասկացությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածքի հասկացության սահմանման շրջանակներում հղում է կատարվում Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց միասնական գրանցամատյանից ստացվող քաղվածքին, առաջարկում ենք խնդրո առարկա՝ 10 տոկոս մասնակցություն սահմանող հասկացությունը հանել նախագծից:

2. Նախագծի 3-րդ հոդվածով օրենքի 28-րդ հոդվածում առաջարկվող՝ լրացվող 3-րդ մասում հարկ է նախատեսել իրական սեփականատիրոջ փոփոխման դեպքում հանձնաժողովին տեղեկացնելու և համապատասխան քաղվածք ներկայացնելու լիցենզավորված անձի պարտավորությունը:

3. Նախագծի 4-րդ հոդվածով առաջարկվող լրացումներով (այդ թվում՝ ենթակետերի առաջարկվող հերթականությամբ) խաթարվում է օրենքի 30.1-ին հոդվածի տրամաբանական կառուցվածքը: Մասնավորապես, օրենքի 30.1-ին հոդվածի 2-րդ մասում թվարկված են գործունեության լիցենզիայի դադարեցման դեպքեր, մինչդեռ նախագծով առաջարկվող լրացումները վերաբերում են համապատասխան քաղվածք չներկայացվելու դեպքում կարգավորող մարմնի կողմից ձեռնարկման ենթակա քայլերին (ոչ միայն լիցենզիայի գործողության դադարեցմանը):

Հաշվի առնելով նշվածը, ինչպես նաև սույն գրության 2-րդ կետով արված առաջարկը՝ նպատակահարմար է լիցենզավորված անձի կողմից իրական սեփականատիրոջ փոփոխման դեպքում հանձնաժողովին տեղեկացնելու և համապատասխան քաղվածք ներկայացնելու պարտավորության խախտման համար պատասխանատվության կիրառման ընթացակարգը սահմանել առանձին հոդվածով՝ ըստ պատասխանատվության միջոցների կիրառման հերթականության (նախ՝ նախազգուշացում, այնուհետև՝ տուգանքի կիրառում, լիցենզիայի գործողության կասեցում և դադարեցում), իսկ մինչև նախագծի ընդունումն արդեն իսկ համապատասխան լիցենզիա ստացած անձանց կողմից իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք ներկայացնելու պարտավորության խախտման համար պատասխանատվություն սահմանող իրավանորմը (այդ պարտավորության հետ միասին) ամրագրել նախագծի անցումային դրույթներում:

4. Հաշվի առնելով օրենսդրական տեխնիկայի պահանջները՝ անհրաժեշտ է նախագծի՝

1) վերնագրից հանել «փոփոխություններ և» բառերը.

2) 1-ին հոդվածով լրացվող կետն «իրական» բառից առաջ լրացնել «15.1.» թվով.

3) 2-րդ հոդվածի 1-ին մասով լրացվող 2.1-ին մասում «սույն օրենքի» բառերը փոխարինել «սույն հոդվածի» բառերով.

4) 2-րդ հոդվածի 1-ին մասի համարակալումը հանել, քանի որ ներկայացված հոդվածով կատարվում է միայն մեկ լրացում.

5) 3-րդ հոդվածով օրենքի 28-րդ հոդվածում լրացվող 3-րդ մասում հստակեցնել՝

ա. «օրենքով սահմանված ժամկետում» արտահայտությունը, քանի որ գրանցման համար նման ժամկետ՝ ինչպես «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, այնպես էլ՝ նախագծում առկա չէ,

բ. «իրականացնում է իրական սեփականատերերի գրանցում» ձևակերպումը՝ հաշվի առնելով այն, որ իրական սեփականատերերի գրանցում իրականացնողը ոչ թե իրավաբանական անձն է, այլ իրավասու համապատասխան պետական մարմինը.

6) 4-րդ հոդվածում «գրավոր զգուշացումը» բառերը փոխարինել «նախազգուշացում» բառով.

7) նախագծում, այդ թվում՝ որպես համապատասխան պարտավորության խախտման համար պատասխանատվություն կիրառող, նշված է լիազոր մարմին, որպիսին, օրենքի տրամաբանությունից և իրավասությունների շրջանակից ելնելով, կարող է հանդիսանալ հանձնաժողովը: Ուստի, տարընկալումներից խուսափելու նպատակով անհրաժեշտ է նախագծում «լիազոր մարմին» բառերը և դրանց բոլոր հոլովաձևերը համապատասխանաբար փոխարինել «հանձնաժողով» բառով և դրա համապատասխան հոլովաձևերով (կրճատ անվանումը որպես հասկացություն սահմանված է օրենքով):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

15 հոկտեմբերի 2019 թվականի N 1479 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Հակոբ Վարդանյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-297-25.09.2019-ՏՀ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 15
Երևան

ՆԱԽԱԳԻԾ
Պ-297-25.09.2019-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Էներգետիկայի մասին» 2001 թվականի մարտի 7-ի ՀՕ-148 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածը լրացնել 15.1-ին կետով.

«իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք՝ իրական սեփականատերերի հայտարարագրի կամ իրական սեփականատերերի վերաբերյալ փոփոխված տեղեկությունների վերաբերյալ քաղվածք Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից.»:

Քաղվածքում ներկայացվում են 10%-ից ավել մասնաբաժին ունեցող անձանց վերաբերյալ տեղեկությունները:

Հոդված 2. Օրենքի 24-րդ հոդվածը՝

1) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 2.1-ին մասով.

«2.1 Սույն օրենքի 1-ին մասով սահմանված փաստաթղթերի հետ մեկտեղ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ջերմային էներգիայի արտադրության կամ էլեկտրական եւ ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիայի համար դիմողը ներկայացնում է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքով սահմանված իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք՝ դիմումը ներկայացնելուն նախորդող 5 օրվա դրությամբ.»:

Հոդված 3. Օրենքի 28-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 3-րդ մասով.

«3. Էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ջերմային էներգիայի արտադրության կամ էլեկտրական եւ ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիա ունեցող անձը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքով սահմանված ժամկետում իրականացնում է իրական սեփականատերերի գրանցում եւ լիազոր մարմին է ներկայացնում իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք, ինչպես նաեւ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքով սահմանված կարգով եւ ժամկետում իրական սեփականատիրոջ փոփոխության պետական գրանցումից հետո 14 օրվա ընթացքում փոփոխության մասին տեղեկացնում է լիազոր մարմնին՝ ներկայացնելով իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք:»

Հոդված 4. Օրենքի 30.1-ին հոդվածի 2-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր ե, զ, է եւ ը կետերով.

«ե) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ջերմային էներգիայի արտադրության կամ էլեկտրական եւ ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիա ունեցող անձը չի ներկայացրել սույն օրենքի 24-րդ հոդվածի 2.1-ին մասով

պահանջվող իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք:».

«զ) սույն հոդվածի 2-րդ մասի ե) կետով նախատեսված դեպքերում տրված զգուշացման հիմքերը չվերացնելու դեպքում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ջերմային էներգիայի արտադրության կամ էլեկտրական եւ ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիան կասեցվում է մինչեւ սահմանված տեղեկատվության ներկայացումը (բայց ոչ ավելի, քան 120-օրյա ժամկետով):

է) լիազոր մարմինը էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ջերմային էներգիայի արտադրության կամ էլեկտրական եւ ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիա ունեցողին տալիս է գրավոր զգուշացում սույն հոդվածի 2-րդ մասի

ե) կետով նախատեսված դեպքի բացահայտման օրվանից հետո՝ 10-օրյա ժամկետում:

ը) լիազոր մարմինը էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ջերմային էներ-գի-այի արտադրության կամ էլեկտրական եւ ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիան կասեցնելու վերաբերյալ որոշում է ընդունում սույն հոդվածի 2-րդ մասի ե) կետով նախատեսված դեպքում լիազոր մարմնի կողմից տրված զգուշացմամբ սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 10-օրյա ժամկետում:»

Հոդված 5. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի նոյեմբերի 1-ից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո սույն օրենքի իմաստով էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ջերմային էներգիայի արտադրության կամ էլեկտրական եւ ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիա ունեցող անձինք իրական սեփականատերերի վերաբերյալ առաջին հայտարարագիրը պետական ռեգիստր են ներկայացնում ոչ ուշ, քան մինչեւ 2020 թվականի հունվարի 1-ը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եվ անհատ ձեռնարկատերերի

պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման վերաբերյալ

Օրենքի ընդունման առաջնային նպատակն է էներգետիկայի բնագավառում, որը հանրային ծառայությունների կարեւորագույն ոլորտներից մեկն է, թափանցիկության ապահովումը: Այդ մոտեցումն ամրագրված է 2019 թվականին ընդունված Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրում, որպես կոռուպցիայի դեմ պայքարի գործիքներից մեկը: Հանրային ծառայությունների ոլորտում գործող իրավաբանական անձանց գործունեության թափանցիկությունը բխում է հանրային շահի սպասարկման պետության գործառույթից:

Տվյալների հրապարակայնության եւ մատչելիության ապահովման համակարգը ներդրված է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում 2019 թվականի ապրիլի 23-ին ընդունված համապատասխան լրացումներով, ուստի նշյալ բնագավառում համապատասխան կարգավորումներ իրականացնելով հնարավոր է դառնում էներգետիկայի բնագավառում իրավաբանական անձանց իրական սեփականատերերի բացահայտումը: